

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպէսով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлис, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողաւորին 1) կոպէս.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻՓՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նորից յիշեցնում ենք.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Հայոց դրամատիկական ընկերութիւնը. Առաջին քառաձայն երգը Կրիմեայում. Նամակ Բաթումից. Նամակ Շուշաէրից. Ներքին լուս. բեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուս. բեր.—ՀԵՌԱՅԻՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ. ՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Բարոզ:

ՆՈՐԻՑ ՅԻՇԵՑՆՈՒՄ ԵՆՔ

Մենք հրաւեր կարգացնենք մեր հասարակութեան յիշելու կարօտեալներին եւ բաժին հանելու նրանց համար առաջիկայ տանք: Կարօտեալների թիւը շատ մեծ է եւ մենք մեր խմբագրութեան մէջ ամէն օր լուծում ենք բազմաթիւ աղերսներ եւ խնդրներ մի քանի լուրջով օգնելու նրանց, որպէս զի կարօտութեան խտուրտութիւնը կարելի չի մեղմացնել մի թէկուզ աննշան չափով:

Այդ կարօտեալների շարքում մենք տեսնում ենք որբերին, աղքատներին, անդամաւոր երեւոյթներին, ծեր եւ հիւսիսը դադարեալներին, պանդուխտներին, մի խօսքով զանազան թշուառութիւնների երկթաթիւմած անձանց, որոնք հնար չունեն սեփական միջոցներով ոտքի կանգնել եւ իրանց ապահովել: Նրանք սրտաձմէրկ պատմութիւններ են անում իրանց վիճակի մասին եւ բացում ձեր առաջ թշուառութեան սոսկալի պատկերներ: Մէկը ունեցել է վայելուչ կեանք եւ զիրք ու կորցրել է բազմի շար բերումներից, միւսը կորցրել է տան աշխատող ուժին եւ սնանկացել, երրորդը հիւանդացել է եւ թշուառացել, չորրորդը զոհ է դարձել հարստահարողի եւ կեղեքողի, իսկ շատերը ծնվել են դժբաղդ եւ երեք մի քաղցր օր չեն տեսել իրանց կեանքում: Ծնվել են աղքատ, ապրել են զրկանքներով լի եւ այժմ էլ հանդիսանում են ձեր առաջ իրանց սոսկալի թշուառութեամբ:

Մի հասարակութիւն, որի շրջանում շատ կան անկեղծներ եւ թշուառներ, պէտք

է ամօթ կրէ, որ նա հաստատ եւ խելացի միջոցներ չէ գործ գրել իր դժբաղդ եղբայրներին եւ քոյրերին խնամելու, իր որբերին պաշտպանելու, կրթելու եւ ոտքի կանգնեցնելու: Հասարակութիւնը պէտք է մի շարք հիմնարկութիւններ, օրինակ, ապաստարանների, որբանոցների, աշխատանքի տների, հիւանդանոցների, անկեղծանոցների եւ կրթարանների միջոցով օգնութեան զայ թշուառացածներին եւ թող չը տայ, որ նրանք միան կարօտութեան եւ զրկանքների ճիրաններում:

Յաւելով պէտք է նկատենք, որ մեր գոյութիւն ունեցող հիմնարկութիւններով մենք դեռ շատ քիչ օգնութիւն ենք հասցնում կարօտեալներին եւ անխառն երեք, թէ ինչպէս բազմաթիւ մարդիկ մեզ են մատնում քաղցի եւ զրկանքների:

Մենք նորից յիշեցնում ենք մեր հասարակութեանը, որ նա զոհն այս տօն օրերին աւելի առատաձեռն լինի եւ օգնութեան ձեռք մեկնելով զրկած մարդկանց սրբէ նրանց արտասուները:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԴԻՐԱՍԱՅԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Մեր ընթերցողներին յայտնի է, որ Թիֆլիսում հիմնված Հայոց Դրամատիկական ընկերութեան կանոնադրութիւնը հաստատված է կառավարութեան կողմից: Առաջիկայ երեքշաբթի օր, ապրիլի 16-ին, նշանակված է այդ ընկերութեան առաջին ընդհանուր ժողովը: Այդ առիթով հարկաւոր ենք համարում ծանօթացնել մեր ընթերցողներին ընկերութեան կանոնադրութեան մի քանի կէտերի հետ:

Դրամատիկական ընկերութիւնը հաստատվում է Թիֆլիսում ճապաստելու դրամատիկական արուեստի զարգացման իր անդամների մէջ եւ կազմակերպելու մշտական եւ պատահական հայկական ներկայացումներ Թիֆլիս քաղաքում եւ նրա նահանգի միւս տեղերում: Թիֆլիսի նահանգից դուրս ընկերութիւնը գործելու իրաւունք չունի:

Թերթը.—Էսքան տարի քիչ չէ կարողացայ ես կարգին մարդ չիմել, ա բոի արջ. երէկ էնդուր նմանի թանգազին երեքաշը ձիւցերի, ու փչացրի, անիրաւ. ջանդ դուրս կը գնար, որ կարգին ծալէր. նրա արջին հինգ մանէթով ձեռք չի բերվիլ.—Եւ ասէ ցնա «Յիսուս» կին, դու զի լաւ... Ծարունակում է նա ընթերցանութիւնը: Ափսոս էն երեքաշ, փսսոս քոռանաս դու, դպիր».—միջանկեալ կրկնում է տէր հայրն ու բռնութի քաշում:

Նա չէ կարողանում մոռանալ, որ երէկ հանգուցեալ տիկնոջ հրաշալի երեքաշը, որը թաղող քանանայի սեփականութիւն է համարվում, ճնշովեալ զպիր խնամքով ծալելու տեղ ձիւցից ու փչացրել իսպառ. այդ թանգազին կորուստը հեշտ է մոռանալ, ինչ է. նա դեռ երկար կը կսկծայ նրա համար:

Վերջապէս անթիւ ընդմիջումներից յետոյ նա վերջացնում է աւետարանի ընթերցանութիւնը, դառնում սգացող կանանց ու ասում՝ «բաւաւ կան ա, սուս կացէք, բան ունեն ասելու ձեզը: Կանայք շարունակում են իրանց աղեկտուր սուգը: «ԲՅ, բՅ, սուս կացէք, ասում են ձեզ. բոյ ա, հերիք ա, ինչքան լաց եղաք, ձեր մեռելը հօ չի կենդանանալու այդքան լաց ու կոծից»: Նրան դարձեալ չեն լսում: Տէրտէր ստիպված է հանել գրգռանքի ծխախոտի ամանը ու մի առժամանակ զբաղվել նրանով:

«Օ՜վ, բա դուք բեզարեցիք ոչ,—համբերութիւնը հատած խօսում է նա,—տաղ արէք, թէ չէ հանդէպ կիսատ թող կանեմ ու կը գնամ լսեցէք, մի-երկու խօսք ունեմ ասելու. խօսքով քարոզով միմիայն չեմ, հէր օրհնվածներ, այլ ոչ թէ արտասուքով:

Կանայք վերջապէս զսպում են իրանց ողբը ու լարված ուշադրութեամբ տէրտէրի միմիայն:

Այդ նպատակին հասնելու համար ընկերութիւնը իրաւունք ունի.

1) Ընդհանուր օրէնքների հիման վրա ձեռք բերել իւր սեփականութիւն եւ կամ վարձել թէ դա՛նքների՝ ներկայացումների համար եւ թէ քնակարան՝ ընկերութեան գոյքերը պահելու, ինչպէս եւ բնական ամեն տեսակ պիտոյքներ: 2) Իր գոյքը փոխ տալ մշտական սիրողների խմբերին: 3) Հրատարակել, գրաւել, նախան կանոններն պահպանելով, հայերէն ինքնուրոյն եւ թարգմանական դրամատիկական երկեր: 4) Մրցանակներ նշանակել հայերէն լեզուով դրամատիկական ամենալաւ երկերի համար եւ 5) կազմել, իւրաքանչիւր անգամ, պատշաճաւոր իշխանութեան թոյլտրութեամբ, թատերական դասարաններ (классы) եւ ժամանակաւոր դասընթացներ Թիֆլիսում՝ դերասանների պատրաստութեան եւ զարգացման համար:

Անա եւ այն աղբիւրները, որոնցից կազմվում են ընկերութեան միջոցները. 1) Անդամների վճարները. 2) Ընկերութեան կազմած ներկայացումների մուտքը. 3) Ընկերութեան աշակերտութեան կազմած ներկայացումների մուտքի բարեյօժար համաձայնութեամբ որոշված մասը. 4) Ընկերութեան դրամագլխի տոկոսները, նրա գոյքի եւ հրատարակութիւնների կեամբ, ինչպէս եւ իւր սեփականութիւն ձեռք բերած դրամատիկական երկերից ստացված վարձատրութիւնը եւ 5) Յօդուր ընկերութեան ստացված պատահական գումարները:

Անդամները չորս տեսակի են. պատուաւոր, գործադիր, հիմնադիր եւ նպաստող: Հիմնադիր անդամները պիտի վճարեն տարեկան 10 ռուբլ. ոչ պակաս: Առաջին ընդհանուր ժողովը հիմնադիր անդամներից է կազմված: Պատուաւոր կոչվում են այն անդամները, որոնք իրանց անձնական գործունէութեամբ մեծ ծառայութիւն են մատուցել կամ կարող են մատուցանել թատերական գործին, նոյնպէս եւ նրանք, որոնք նուիրում են 1000 ռուբլ. ոչ պակաս: Գործադիր անդամներ են նրանք, որոնք տալիս են տարեկան 5 ռուբլ. ոչ պակաս կամ միանգամ 50 ռուբլ. Գործադիր անդամներին ընտրում է ընդհանուր ժողովը: Իսկ

թարանք» լսում: Այսօր մեծ պատ ա,—ասում է նա,—ապալարանքի, մեղքերի քաւման օր ա ի՞նչ ա, կարծում էք մեծ պատը նրա համար ա սահմանած, որ օրը երեք անգամ զուգվէք, զարդարվէք ու ժամ դնաք, որ այնտեղ համ ձեզ ցոյց տաք, համ ուրիշներին մտիկ անէք, որ պատը մահանակալած օրը երեք-չորս անգամ մեղրով ու հալվով զափա խմէք ու չիւրախտի ձէթով եփած փլաւ անուշ անէք: Ոչ, սիրելիք, ոչ. մեծ պատին պէտք ա աշխատել, տարալ ընթացքում գործած բոլոր մեղքերից ազատվել, հոգեպէս մաքրվել, մերձաւորին յիշել, չունեւորին օգնել, քաղցածին կերակրել, ընկածին ոտի վրա կանգնեցնել ու այդպիսով հոգի փրկել, հանդերձաւ աշխարհում տեղ պատրաստել աշակողման զսուում: Էսօր-էգուց Ձատիկ ա գալու: Դուք նոր-նոր չորեր էք հանգնելու, նոր չլապէք ծածկելու ու մինչն հինգ ուտիլ պտէք ու խմէք. մի րօպէ անգամ մոռանելու էք, թէ ինչ բան է Ձատիկը, ու օրհնվածներ Ձատիկը Գրիստոսի Յարութեան տօնն ա. ճշմարիտ ա, ուրախութեան օր ա. պէտք ա ուրախանալ. բայց գիտէ՞ք իր ա. Յարութիւնից առաջ ինչ սոսկալի տանջանքներ կրեց, ինչպէս չարչարվեց մեր Տէր Յիսուսը ու խաչվեց Գողգոթա սարի վրա: Իսկի մի անգամ ձեր կեանքում մտածած էք դրա մասին, երեւակայած էք ձեզ այդ սարափնները, ոչ, ի հարկէ, Հէնք որ Ձատիկը մօտենում ա, քիչ ա մնում, թէ իրար միս ուտէք, սկսում էք չորի, զարդարանքի ետեւից ընկնել, կեր ու լուծի պատրաստութիւն տեսնել, ձեր խեղճ մարդկանց դախնեւում խէր ու բարաքաթ չէք թողնում, բազմաթիւ անգամ տալիս ու վրա էք առնում, ամեն կտորի էլ հաւան չէք կենում, շատ բան Թիֆլիսից էք բերել տալիս: Գրիստոսը

նպաստող անգամ կոչվում են նրանք, որոնք իրանց անվճար գործունէութեամբ նպաստել են ընկերութեան նպատակներին:

Ընկերութիւնը ունի. 1) ընդհանուր ժողով, որ գումարվում է տարին մի անգամ, սեպտեմբերին, իսկ հարկաւոր դէպքերում կարող է եւ արտակարգ նիստեր ունենալ. 2) վարչութիւն, բաղկացած եօթն անդամից եւ երեք փոխ-անդամից, որոնք ընտրվում են երեք տարի ժամանակով եւ 3) վերաստուգող յանձնաժողով, բաղկացած երեք անդամից եւ երկու փոխ-անդամից, որոնք ընտրվում են ամեն տարի: Բացի դրանից ընդհանուր ժողովները ճնշակալաւոր կամ մրցանակաւորաւորութեան ներկայացում երկերը ընտրելու եւ գնահատելու համար, կամ առանձին խնդիրները ճնշելու եւ կամ առանձին յանձնարարութիւններ կատարելու համար կարող են ընտրել ընկերութեան անդամներից մասնաժողովներ:

Կանոնադրութիւնը թող է տալիս, որ վարչութեան եւ յանձնաժողովների անդամները վարձատրութիւն էլ ստանան, եթէ ընկերութեան միջոցները կը ներկն:

Անա այս նոր ընկերութեան կերպարանքը: Նպատակը շատ համակերպի, իրաւունքներ լայն, գործելու ասպարէզը միանգամայն պարզ: Մնում է գործել, մնում է կենդանացնել գործը: Յանկալով նոր ընկերութեան կատարեալ աջողութիւն, իսկ նրա վարչներին եռանդ եւ տոկունութիւն, մենք հրաւիրում ենք աշակեղ ընկերութեան, ապ նրան միջոցներ իր բարի նպատակները գործադրելու համար: Չը պէտք է երբէք մոռանալ, որ հասարակական համակարան է այսպիսի հիմնարկութիւնները ապրեցնողը: Իւրաքանչիւր մարդ, տալով տարեկան 5 ռուբլ. կարող է նպաստել մարմնի բեմի բարգաւաճման: Սա մեծ գոհողութիւն չէ: Մենք կը կամենայինք, որ ընկերութեան կանոնադրութեան մէջ չը լինէր այն կէտը, որով գործադիր անդամները ընտրվում են ընդհանուր ժողովից: Այդ ձեւակաւութիւնը կարող է ազդել ընկերութեան անդամների թիւի վրա: Բայց, ի հարկէ, չէ կարելի ենթադրել անգամ թէ այդ ձեւակաւութիւնը արգելք կը հանդիսանայ ամեն մի մարդու գէմ, որ կամենում է իր ան-

չարչարվեց ու խաչվեց մեղ մեր մեղքերից, յաւիտենական կորստից փրկելու համար. նա տանջվեց, որպէս զի մենք բախտաւոր ապրենք, նեղութիւն, աղքատութիւն չը քաշենք, զըրկանքներ չը կրենք. նա իր աղիւղ կեանքը խաչի վրա սոսկալի մահով զոհեց իր մերձաւորի համար, տառապողի, վշտացողի համար, արտասուողի ու հեծկողից ինչպիսիք էք ձեր կօպէլները, ձեր մի կտոր աւելորդ հացը, ձեր ճոխ սուփրի ամենախնային փշրանքներն անգամ: Այժմ էն օրերն են, երբ պէտք ա այդպիսիներին յիշէք ամեն րօպէ ու նրանցից բնաւ երես չը դարձնէք. Ձատիկն էն օրն ա, երբ պէտք ա առաջ նրանց կերակրել, համար քաղց լցնէք ու յետոյ ինքներդ սուփրա նստէք: Տէր մեր Յիսուս Գրիստոսն ասում ա՝ «Ես եմ հովիւ քաջ, հովիւ քաջ գանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց»: Գրիստոսը իր ժամանակի ամբողջ մարդկութեան հովիւն էր, էն էլ քաջ, անվախ հովիւ. նա իր անձը դրաւ «ի վերայ իւր ոչխարաց», չարչարվեց ու խաչվեց, ինչպէս ասացի, իր հօտի բախտաւորութեան համար: Խաչվելով, թաղվելով, յարութիւն տանելով ու յետոյ համբառնալով երկինք, հեռանալով փուշ անցաւոր աշխարհից, նա իր հօտը անտէր չը թողեց. նա իր տեղը թողեց իր առաքելախնային. առաքելներն էլ քրիստոնէութիւն տարածեցին ու իրանց տեղը թողեցին մեզ, հոգեւորականեան իրաւ, որ հովուներ Գրիստոսի հօտը, հեռու պահեն նրան ստատանայի գայթակղութիւններից, չար փորձանքներից եւ ուղիղ ճանապարհով տանենք նրան դէպի երկնային արքայութիւն: «Ես հիմա ձեր հովիւն եմ, դուք իմ հօտը պարզ ասած՝ դուք ոչխարներ էք, իսկ ես ձեր չորանը: Էսօր երեսուն-քառասուն տարի ա,

դառնալով նպաստել ընկերության գործին:

ԱՌԱՋԻՆ ՔԱՌԱՋԱՍԵՆ ԵՐԳԸ ԿՐԻՄՈՒՄ

Մեր հասարակական փշոտ սպարեզդից անյայտացաւ եւ մի վերին աստիճանի համակրելի անձնաւորութիւն:

Կարծես երէկ լինէր այն օրը, երբ ես առաջին անգամ ծանօթացայ Բ. Կարա-Մուրզայի հետ Յիշում եմ, 1897 թ. ակտիւ ամառային ամիսներէն մէկն էր:

Առաջին անգամն էր, որ Կրիմի հայերս բնամիջ պիտի լսէինք մեր մայրենի լեզուով բառաձայն ներդաշնակ երգեցողութիւն: Մեր քաղաքը Կրիմի—պէտք է ասած—յետ ընկած քաղաքներից մէկն էր համարվում, այստեղ խմբված էր մի փոքրաթիւ հայ հասարակութիւն, որ պիտի վերջէր ինչ, եթէ ասենք՝ հետո էր հայկական քառաձայն երգերի գոյութեան մասին գէթ մասամբ գաղափար ունենալուց...

Մեր քաղաքն էր եկել Կարա-Մուրզան մի հայկական կոնցերտ տալու նպատակով: Նա իր շուրջն էր խմբել տեղական հայ մատաղ սերունդը եւ եռանդով սովորեցնում էր նրանց՝ կոնցերտի համար պատրաստած երգերը: Շատ կարճ ժամանակամիջոցում նա կազմակերպեց մօտ 40 հոգուց բաղկացած երկուսն խումբը: Կոնցերտի ծրագիրը արդէն պատրաստ էր:

Ամբողջ քաղաքը մեծ հետաքրքրութեամբ սպասում էր հայկական համերգին. նոյն իսկ օտարազգիները, որոնք հայերին մի կորած, մեռած ազգերի չարքունի էին դառնում, յանկարծ օթափվեցին եւ սրբաբնի հետաքրքրութեամբ էին սպասում:

Եկաւ նշանակած երեկոն: Քաղաքի բոլոր օտարազգի խնուրեցեցիներն եւ հայերի մեծամասնութիւնը սկսեցին խուռն բազմութեամբ լցվել կոնցերտի դահլիճը... վերջապէս լրացաւ նշանակված ժամը: Հնչեց բնմիջ ետեւից Զորքաճակը, դահլիճում լցված բազմութիւնը սլուր-տատորփ սպասում էր վարագոյրի բացվելուն: Դեռ վարագոյրը չէր բացված՝ հնչեց դահլիճում մեղմ մատաղ, այդ «Մեր հայրենիք» ընկալական (նախաբանն էր): Դաշնամուրի համառօտ նուագին յաջորդեց 40 հոգուց բաղկացած խմբի ներդաշնակ քառաձայն երգեցողութիւնը եւ վարագոյրը դանդաղաբար բարձրացաւ:

Գեղեցիկ տեսարանը՝ միաժամանակ երգեցողութեան հետ՝ ոգեւորութեան մի թարմ հոսանք մտքեց հանդիսականների ներքին աշխարհում: Վերջացաւ երգը եւ դահլիճում մի վայրկեան տիրում էր ընդհանուր խորին լուռութիւն, սակայն յանկարծ, կարծես միանգամից, ցնցվեցին, օթափվեցին հանդիսականները եւ ամբողջ դահլիճը ոլորտաց յանկարծակի բուռն ծափահարութիւնների թնդիւնից եւ «կեցցէ» անվերջ աղաղակներով:

Համերգը վերջացաւ շատ անող: Ներկայ ե-

ղող հայ հասարակութիւնը երջանիկ էր զգում իրան եւ իրաւունք էր համարում պարծենալ հայոց երգեցողութեան կատարելագործված երգչականութիւնը: Համերգից յետոյ, Կարա-Մուրզան մի քանի կրկնուր խօսքերով—առանձնապէս խմբին բացատրեց երգչականութեան ընդարձակ նշանակութիւնը: Ընդհանրապէս զգալի առաջադիմութեան գործում եւ մի եւ նոյն ժամանակ մատնանիլ արեց այն միջիթարիչ երեւոյթը, որ մեզանում հետզհետէ հանդէս են գալիս երիտասարդ անհատներ, որոնք մի առանձին սերով ուսումնասիրում են եւրօպական մուզիկան, եւ զբաղւելով զարկ տալիս հայ ազգի մէջ երգչականութեան զարգացման...

Կոնցերտի հետեւեալ օրը Կարա-Մուրզան մեկնեց քաղաքից, սակայն սրբաբնի ոգեւորութիւն, սրբաբնի սէր եւ միջիթարիչ էր տիրում մեր քաղաքի մէջ: Մարդ մի առանձին միջիթարիւն էր զգում, երբ նոյն իսկ փողոցով անցնող ամեն մի հայ մանուկի բերանից լսում էր «Ձանգիւղում», «Հծի», «Ձմեռն անցաւ» քաղաքայուր եղանակները: Անցել են այդ օրից հինգ ձիգ տարիներ, բայց նրա տարածած երգերը մինչեւ այժմ էլ երգվում են:

Այո, նա եղաւ առաջինը, որ Ռուսաստանի ամբողջ հայութեան մէջ տարածեց մեր ժողովրդի մտքի ուրախ եւ մեղամոգն արտայայտութիւնների արձագանքը:

Շատ ցանկալի էր, որ զոնէ այսուհետեւ զնահատէին Կարա-Մուրզային, նրա բեղմնաւոր աշխատանքը, այն է՝ առանձին հրատարակութեամբ լրջ համվեր նրա ինքնուրոյն հեղինակած եւ ներդաշնակ երգերի ժողովածուն:

Թ. Թումանյան

Ասխարադ

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

Ապրիլի 8-ին

Էժանագին կամ ձիգ ու հանրամատչելի գրադարան-ընթերցարանների կարիքն ու անհրաժեշտութիւնը այժմ զգացվում է նոյն իսկ գիւղերում: Օրէն է ասել, որ Բաթումի իր ճահճացած կեանքով չէ ցանկանում մի քայլ էլ առաջ գնալ եւ սրանից երկու տարի առաջ բացված, եւ այն էլ մեծ բանաստեղծ Պուշկինի անունով, գրադարան-ընթերցարանը շատ խեղճ գործիւն մէջ է:

Այո, կայ Պուշկինեան գրադարան-ընթերցարան, քաղաքային վարչութեան միջոցով բացված, բայց... բայց դատողութիւններից հետո փախչելով եղածը հանդէս բերեց: Կայ մի խառնութեամբ անհետակ, կան երկու սեղաններ եւ, ի հարկէ, լամպներ, կայ եւ մի մարդ, որ որոշած ժամերին բաց է անում ու փակում է գրադարան-ընթերցարանի դռները. կան եւ մի շուխտ ու կենտ յաճախողներ—եւ ասա ամենայն ինչ կատարեալ է: Յաճախողը պիտի կարդայ—ի հարկէ լրագրիներ եւ գրքեր: Դուք

սուսմական կնկայ տէր դարձիք: Մի տաս հազար մանկէթ հարսնացուի անունով դրա բան-կում թէ չէ, օրհնվածը ուսում-մուսում մի կողմ չարկում եւ աչքերը հուփ գնաց պսակի տակ իսկ ես, եւ, դուքանեմ երջանիկութեան համար սուտ երգչուհու, մնացի դատարկածուն էն կողմին կանգնած, պսակադրամ անգամ թամամ չը ստացայ: Թանգագին խալաթները, սամոյրի մուշտակն ու կանաչ-կաշմիր հարկուրանցները իմ գտած միջոցները ստացան: Ոչ մարտն նրանք էդ խալաթները, ոչ իմ տուրումն: քանի-քանի էջհէնց գործեր եմ գրել: Բերել գիտե՞ք. անթիւ աղկերեղան համար հարուստ փեսացուներ եմ գտել ու տղերանց համար հարուստ հարսնացուներ ու մեծ մասամբ մէջդանի հասարակ դպլտի պէս սուտ երգչուհու, սրան-սրան խալաթներ ու կաշաքներ խոստանալով եւ անգիրը, տեսնում էք, էդ առոււտուրումն են սպիտակել: Հոգի կորցնելուց սաւահի ինչ եմ չանել ես, ինչ, ինչով են ինձ վարձատրել—ապերախառնութեամբ ու երախտաւորութեամբ: Բաները գրատեղուց յետոյ դռները քնիւ առաջին փակել են ու գրուխ հողեր Անս իմ գլխին միշտ ինչ օյն են դրել իմ ոչ-խարսերի, իսկ ես չարուստակում եմ անձն նրանց համար գոհել:

Ոսկի աքիլ, դու սարըցի (գիւղացի) ես, դառնում է տէրտէրը ներկայ գտնվող կանանցից մի հասակաւորը, —մի ասա, քո հօրն ուրբ-մի, դու լաւ կը գիտենաս՝ չորանք ինչով ապարուստ իր ոչխարներին: Ինչ ա անում նա—չկիթում է ու բուրբը խուզում, ու տէր—պաւտսմանում է Ոսկի աքիլը—«Հա, քեզ արքայութիւն ըլի, Ոսկի աքիլ, —չարուստակում է տէրտէրը,—կիթում ա օրը երկու անգամ, խու-

հայ էք: Ներս էք մտնում եւ ցանկանում էք հայերէն մի բան կարդալ, սեղանի վրա կան «Մշակ» եւ «Մուրճ». պահանջում էք գիրք, ստանում էք գրքերի ցուցակը ձեր ցանկացածը ընտրելու եւ անա. Отдѣлъ I Литературы—«Թիֆլիսեցոց մտաւոր կեանքը», «Նալ եւ Դամայանտին», «Նալի փոքրաւորը», «Մուկուչի հաւիկը», «Գոռոզ Արմաւենի», «Երկու եղբայր», «Մոռան», «Թի երթաւ», «Մոխրատի-տիկ», «Կարմիր գլխարկ»—եւ բոլորը 91 կտոր գիրք:

Отд. II—Естествознанія «Ուղեցոյց գործնական չերամպայանութեան» «Բիւրա», «Երկրի եւ երկնքի մասին», «Չորսցներ ընտելեան մեծ եւ անեղ երեւոյթների մասին» եւ այլն—11 կտոր: Отд. III. Медицина и Гигіена—«Խօրեա», «Մի-ֆիլիս», «Նեղ եւ խոնաւ բնակարաններ», «Օդ եւ կեանք» 6 կտոր: Отд. IV. Географія—«Յարու-թիւն Արարատեան», «Պուշկին»—ընդամենը 3 կտոր: Отд. V դասագրքեր—Դասագիրք հայ-կական ձոյնագրութեան, Եգ. քահանայ Երզն-կեան, Քերականութիւն հայկական—ամենը 2 կտոր... եւ պրծաւ:

Ռուս էք, մի քիչ բաղաւոր էք—Одесскій Листокъ, Черном. Вѣстникъ, Новое Обозрѣ-ніе, Кавказъ, Биржевыя Вѣдомости, Զар-թաթերթ—Сельскій Хозяинъ, Самообразо-ваніе եւ Ново—ամսագիրթ—Волна, Жур-наль для всѣхъ, Кавказскій Вѣстникъ, Миръ-Божій:

Այժմ գրքերը Отд. I. 13 կտոր: Отд. II Литература—Պուշկինի, Դոստոեւիչի եւ Լեր-մոնտովի մի քանի հատորները եւ ապա հին գրքեր—169 կտոր: Отд. III. Медицина и Ги-гіена—8 կտոր: Отд. IV. Географія—8 կտոր: V. Естествоз. и Географія—35 կտոր եւ վեր-ջապէս Основныя Государственныя законы—22 կտոր.—սա էլ պրծաւ:

Վարցի էք—անա ձեզ «Ժվերի», «Ճնօրիս-Փուրցի»—ամսագիրթ «Մօսկուէ», չարաթա-թերթ—«Կվալի» եւ, ի հարկէ, գրքերն էլ այն-քան բազմազան, ինչպէս վերինները:

Տեսե՛ք Բաթումի գրադարան-ընթերցարանի ամբողջ կազմութիւնը: Մի էսկիմոսի առաջ չէիք կարմիր, թէ եւ ոտս, հայ եւ վրաց գրա-կանութեան մասին ոգեւորված խօսելուց յե-տոյ, ներկայացնէիք նրան Բաթումի ընթեր-ցարանի այս հարուստ եւ բազմազան գրքերի ու լրագրիների ցուցակը: Բայց պարտքը կատա-րած վերջացած է եւ տրոհվաւ էլ տեղիք ու-նենք, որ հասարակութիւնը, ժողովուրդը ըն-թերցասէր չէ, անտարբեր է, հակումն չունի դէպի գրքերը, ապացոյց, որ յաճախողներ չը կան, եւ ընկանաւոր հարց է առաջ գալիս—արդե՞ք ընթերցող չը կայ, որ գիրք էլ չը կայ, թէ գիրք կայ, բայց ընթերցող չը կայ: Եւ ես համազօր եմ, որ Բաթումի բանիմաց երիտա-սարդութիւնն ու հասարակութիւնը կը պա-տասխանէ, թէ գրքին ինչ—այ, Թիֆլիսի եւ

զուրկ ա տարին երկու-երեք անգամ ու այդ-պիսով գրուխ պահումս Ես էլ պէտք ա ձեզ խուզեմ, իմ ոչխարներ ու գառնուկներ. հա-զուր էս խուլաթ տեղը ճանկա էք ընկել: Գի-տեմ, որ գնաք տուն, գրուխ հողի պտէք, բայց առաջ թողէք մի ես ձեր գրուխները հո-ղեմ ու այնուհետեւ ինչ կարողանում էք ասա-ցէք: Հիմա հրէս գնալ պտէք սուփա նստէք, ոսկեղայ հարկով դափա խմէք ու նրանից յետոյ էլ մինչեւ երեկոյ ընթացքը Դրանով հանգու-ցեալը արքայութիւն չի գնալ, դրախտի դռնե-րը նրա առաջին չեն բացվի: Եթէ ուղում էք նրա ճանապարհը դէպի աղկերեղանի դասը հարկել, հնչադնել, բարեգործութիւն արէք, բարեգործութիւն, Քրիստոսի պատւէրները կա-տարեցէք, ինչպէս ասացի: Գլխիկը էլ ինչ ցա-ւեցեմ. ուղիղ 60 հոգի կաք հաւաքված այս-տեղ, էս սնաթիւ մարդը 20 Կօսէկ փող հա-նեցէք, 12 մանկէթ փող դրստեցէք եւ դրէք ա-ւետարանիս վրա. կանխի արեք, սպասելու ժա-մանակ չունեմ: Հը, ինչ էք չուարվել ու ինձ մտիկ տալիս, բան եմ ասում ձեզ, հանաք չեմ անում: Իմ ուզածը միայն 12 մանկէթ ա է, շատ չի, տուէք, այսինքն Քրիստոսի 12 առաքեալ-ներից ամեն միին յիշատակին մի մանկէթ նուր-բեցէք, որ նրանց օրհնութիւնը լինի ձեր ու ձեր ննջեցեալի վրա, որ նրանք էս աշխարհում նրա գործը յաջողեցնեն ու զբախտի դռները առաջին բանալ տան: Փի է, Ոսկի աքիլ, Զա-ւահիր ագի, ձեր սրգիքն օրհնելն, փողերը հա-ւաքեցէք, չուտ. բօ, բօ, բօ: Ինչ էք տալ ինչ, լաւ, Յուդայի մանկէթն ուղում չեմ: Նա Քրիստոսին մատնեց. 11 մանկէթ հաւաքեցէք ու տուէք. հը, էլ չէք չարովում: օհ, հոգիս ձեռքիս լինի, բաց կը թողնեմ: Էս րօպէիս 11

կամ հէնց Բաթումի գրադարանացիներու լիքը չին, բայց ինչ միտք ունի գնել ու փոշի-ներում թաղել, երբ պահանջ չը կայ...

Եւ այժմ, այն, երբ գրադարանի պէս հիմ-նարկութիւններն են ընթերցանութեան սեր տարածում, Բաթումը իր խնուրեղէնտ հասա-րակութեամբ գալիս է ապացուցանելու, որ հետո է կանգնած ժողովրդին ծառայելու ցան-կութիւնից եւ միայն երեւի իր փառասիրու-թիւնը չոյած տեսնելու համար է ստեղծի գրադարան-ընթերցարան անունը:

Իրեւ ծովեզրեայ վաճառականական քաղա-ուր ամեն օր, ամեն ժամ հանդիպում են եւ րօպացի ճանապարհորդներ, Բաթումը պարտք ունի իր վրա իր ունեցած հիմնարկութիւնները օրինակելի դարձնելու, կանոնաւոր պահելու: Հարկաւոր է մի քիչ եռանդ եւ ջերմ գործու-նէութիւն եւ անա սկսածը քայլ առ քայլ ա-ռաջ կը գնայ: Ռուս, հայ, վրացի երիտասա-րդութեան վրա է ծանրանում այդ սրբազան պարտաւորութիւնը: Թող նրանք յանձն անեն իւրաքանչիւր իր լեզուին ու գրականութեանը վերաբերեալ գրքերով ու թերթերով հարստաց-նել ընթերցարան-գրադարանը եւ այն ժամա-նակ կունենան ընթերցողների մեծ տոկոս եւ րացի այդ, հիմնարկութիւնը կը ծառայէ հա-տարակութեան ու ժողովրդի կրթութեան զար-գացման գործին:

Իր առողջարար օյով ու ջրով եւ տեղագրա-կան գեղեցիկ պայմաններով պարծեցող, իւր րօտներ ունենալու ցանկութեամբ մի երկրորդ նիցցա դառնալ երազող Բաթումի համար մի-թէ պատուարքն է ունենալ երկու սեղան պա-րունակող, գրքեր, ամսագրեր ու լրագրիներ չունեցող գրադարան-ընթերցարան եւ այն էլ անմահ բանաստեղծ Պուշկինի անունով բաց-ված...

Չէք հաւատայ, եթէ ասելու լինեմ, որ ըն-թերցողները իրանց գլխարկները չարում են այն սեղանների վրա, որոնց վրա թափված եւ գրված են լրագրիները ու գրքերը: Ինչ անեն, գլխարկ կախելու տեղ ու յարմարութիւն չը կայ...

Թ. Պողոսեան

ՆԱՄԱԿ ՇՈՒՆԱԿԻՐԻՑ

Ապրիլի 8-ին

Ուրիշ շատերին կերակրողը այսօր հացի կա-րօտ է: Այն ուշապահները, որոնք տարեկան 70—80 թաղար (թաղարը 10 պուդ է) ցորեն են վերցնել իրանց սեփական գութանով վա-րած, այսօր ճգնաժամի մէջ են ու պուդ-պուդ ալիւր անկելով են ապրում: Դեռ այսպիսիները ոչինչ, ունենալով հին փշաքներ, մի կերպ ապրում են. բայց ինչպէս ապրէ խեղճ դասա-կարգը, ունի՞ նա արդե՞ք սեփական կայք, որ վաճառէ եւ ապրէ:

Ամբողջ օրը մի կերպ երեխաներին խաբելով մանկէթ գրէք աւետարանիս վրա, թէ չէ հա-նդէսը կիսատ թող եմ անում ու գնում. բեզա-րել եմ նիսիս կարգ կատարելուց ու լաւու-թիւններ անելուց. օրէս ետը իմ վարձը պէտք ա նաղող տաք:

Կանայք, աղաւթ քարոզչի այդ տարօրինակ փնտրելը, ոչինչ չեն ձեռնարկում նրա պահան-ջին բաւարարութիւն: տալու համար լսելով նրա քարոզի առաջին մասը, նրանք կարծում էին, թէ տէրտէրը կը վերջացնէ իր քարոզը օգնութեան կարօտ որ եւ է գործ ցոյց տալով նրանց նրանցից շատերը պատրաստվում էին իսկոյն եւ եթ արձագանք տալ նրա հրաւերին: Թանկարծ աղաղիս վերջաբանս:

Կանանցից ոչ ոք, չը նայած նրա ստիպողա-կան պահանջներին, ձեռքը գրպանը չէ տանում: Համերկութիւնը կորցնելով, տէրտէրը ընդհա-տում է հանդէսը ու, անիծելով իր անպար-տաճանակ եւ ապերախտ հօտը, ճանապարհվում տուն: Կանայք, երիտէրի գլուխը ի սրտէ հո-ղելով, չարուստակում են իրանց սուղը: Անցնում է մի կէս ժամ: Տէրտէրը նորից յայտնվում է հանդէսեցեալ տիկնոջ հօր հետ միասին ու շա-րունակում ընդհատած ծիսակատարութիւնը: Բանից դուրս է գալիս, որ հանգուցեալի հայրը պատահում է նրան ճանապարհին, խմած ու զկուլութիւնը, իւրաքանչիւր իր քաղաքի լի, բազմամեղ Իսկարիօտացու մեղաւոր մանկ-թով հանդերձ, նստեցնում կառքում ու բերում գերեզմանատուն:

Տէրտէրը, ի հարկէ, մի վայրկեանապի ան-գամ չէ կարմրում...

Սա. Տէր-Աւետիքեան



ԳՅՈՒՄՆԱԿԻ պրօսպեկտ, տուն Քաչվեթեան ս. Գէորգ եկե-
ղեցուն, առաջին գիմնազիայի հանդէպ: 19—20